



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

13144

891.99  
v-25

№ 2003

Հրատարակութիւն Արեւիկայի գրաւաճառանոցի

# ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹ ԿԱՍ ՄՅԵՐԻ ԴՈՒՊԸ)

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐՈՂԱՅ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

ՅՕՐԻՆԵՅ

Ս. Մ. Ա. Ն. Գ. Ի. Ն. Ե. Ա. Ն.

ԵՐՐՈՐԳ ՏԻՊ

ԹԻՖԼԻՍ

ան Մոսկու վարպահանքի

1887

1097

Գինն է 30 կոպ.

900  
8-23  
1694

891.99

Մ-25

135

Հրատարակութիւն Կեդրոնական Գրավաճառանոցի.

# ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԿԱՄ ՄՅԵՐԻ ԴՈՒՈԸ)

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՅ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

ՅՕՐԻՆԵՑ

Ս. Մ Ա Ն Գ Ի Ն Ե Ա Ն

ԵՐՐՈՐԴ ՏԻՊ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մոլսես Վարդանէանի

1887

1005  
62283

143

Дозволено Цензурою 5 Декабря 1886 г. Тифлисъ.

Типографія М. Вартамянца. Тройц. пер. д. № 11.

## Գ Ի Ի Ց Ա Ջ Ն Ա Կ Ա Ն Ա Շ Ի Ա Ր Հ

Ա.

Ս. Կարապետը Հայերի Համար փառք ու պարծանք է, զօրաւոր և հարուստ է: Շատ իշխաններ և բռնաւորներ նախանձել են Հայերին և ուզեցել են կորզել նրանց ձեռքից Ս. Կարապետը. որովհետեւ նա ունի շատ հարստութիւն և կալուածք, անտառ ու դաշտ, ոչխար և տաւար:

Բաղդադ քաղաքը առաջ շատ շքեղ և մեծ էր, նրա խալիֆան զօրեղ և կտրիճ մարդ էր: Սա զօրք ժողովեց և եկաւ մեր սուրբ Կարապետի վրայ, շատերին զերի տարաւ և մեր ազգը շատ նուազեցրեց:

Գերիների մէջ լինում է մի շատ սիրուն աղջիկ: Բաղդադի խալիֆան հաւանում է նրան և իրան կին է առնում: Սէկ ժամանակից լետոյ երկու տղայ է լինում այդ կնոջից. մէկի անունը դնում են Սբամէլիք, միւսինը՝ Սանասար: Սրանց հայրը կռապաշտ էր, իսկ մայրը խաչապաշտ, որովհետեւ մայրը մեր ազգիցն էր:

\* \*  
\*

Այդ խալիֆան մի անգամ էլ զօրք ժողովեց՝ եկաւ մեր ազգի վրայ: Մեր ազգը (մեռնեմ սուրբ Կարապետի հրաշքին) այս անգամ նրան շատ նեղը լծեց: Այնպէս որ այս մեծ նեղութեան մէջ խալիֆան դիմեց իրանց կուռքին և ասաց. «Ո՛վ մեծ կուռք, դու ինձ ազատիր այս ազգից, և երբ ես ողջ վերադառնամ, խոստանում եմ՝ իմ երկու տղայքը քեզ մատաղ անեմ»:

Նրանց մայրը քնեց, երազ տեսաւ: Տեսաւ որ ինքն երկու ճրագ ունէր. այդ ճրագները իբր թէ մէկ ուզում էին հանգչիլ, մէկ էլ դարձեալ սկսում էին լոյս տալ: Առաւօտը վեր կացաւ և միտք բերելով՝ պատմեց երկու տղայոց երազի եղելութիւնը և ասաց. «Այս գիշեր երազումս Ս. Կարապետն ինձ երևաց, ասաց թէ ձեր հայրն ընկել է նեղութեան մէջ և ձեզ մատաղ է խոստացել իւր կուռքերին: Ուրեմն երբ որ գայ՝ ձեզ պիտի մատաղ անէ: Գնացէք, ձեր ճարը գտէք»:

\* \*

Եղբայրները Աստուած կանչեցին, վեր առան իրանց պաշարը, լցրին պարկը և ճանապարհ ընկան: Ընկան ճանապարհ և շատ պտտեցին. տուին դուրս եկան օտար երկիր:

Գնացին հասան մի նեղ ձոր և տեսան, որ մի գետ է գալիս անցնում. միւս կողմից մի առու էր գալիս մըտնում այդ գետը, կտրում էր նրան և ուժով շերտում էր մինչև մէջտեղը, և ապա խառնվում նրա հետ ու գնում: Սանասարը շատ զարմացաւ այս բանի վրայ և Աբամէլիքին ասաց. «Ով որ այդ ջրի ակը գտնէ և իւր տունը այդ ջրի վրայ շինէ, նրան եթէ զաւակ լինի, այդպէս ուժեղ կըլինի»:

Վեր կացան երկու եղբարք, առուն բռնեցին ու գնացին: Գնացին և աղբիւրը գտան: Այդ աղբիւրի ջուրը մի

մատի հաստութեամբ ջուր է. գալիս է բոլորովին կտրում է իւր տակի առուն, և յետոյ մի անգամ էլ դառնալով՝ խառնվում է նրա մէջ:

Նստում են սոքա այդ աղբիւրի գլխին և իրանց բերդի հիմքը ձգում:

Սանասարը որսի էր գնում, իսկ Աբամէլիքը աշխատում էր բերդի շինութեան վրայ: Այդտեղի մօտակայքում գեռուրիշ բնակութիւն չկար:

Տասն կամ քսան օր բանեցին այդ ամրոցի վրայ: Աշխատանք էր, որ նրանք անդադար կրում էին: Աբամէլիքը մի օր գնաց տեսաւ, որ Սանասարը յոգնած պառկել էր: Արիւնտ որսերը հէնց առանց եփելու թափել էր գետին ու քնել: Շատ կսկծաց նրա դրութեան վրայ և ասաց. «Եղբայր, վեր կաց գնանք մի տէր գտնենք. մինչև երբ պէտք է մենք այս տեղ մնանք և անալի միս ուտենք: Աստուած որ տուել էր, մեզ մեր հօր պալատն ու ամրոցը կըտար»:

\* \*

Երկուսն էլ հեծան ձիերը և դիմեցին Արզրում նրստող իշխանին: Գնացին այդ իշխանին գլուխ տուեցին: Ահագին և ուզածիդ պէս ակնածելի մարդիկ էին այդ երկու եղբայրները:

Արզրում նստող ամիրան շատ հաւանեց դրանց, հարցրեց դրանց ազգն ու հայրենիքը և ասաց. «Դուք ի՞նչ մարդ էք»:

— Մենք Բաղդադի խալիֆի որդիքն ենք, ասաց Սանասարը:

«Հայ, հայ, հայ, ասաց ամիրան և դրանց առաջ թափ տուեց իւր փողպատը. մենք դրանց մեռելներին էինք վախենում, հիմի կենդանիներին պատահեցանք: Ուր կերթաք՝ գնացէք, մենք չենք կարող ձեզ տէր լինել»:

Այնտեղից լետ դարձան և քշեցին գնացին Ղարսում նստող ամիրայի մօտ. նա էլ այդպէս խորշեցաւ նոցանից: Եւ նրանք այդտեղից էլ դառնալով՝ մտքները դրին որ այս անգամ Կապուտկողի թագաւորին գնան:

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Եղբայր, մենք այդ հօրիցն ենք փախչում, բայց ինչո՞ւ նրա անունն ենք դրել մեր վրայ. այսուհետև ուր որ գնանք, ով որ հարցնէ, պէտք է ասենք, թէ մենք բան չունինք՝ ոչ հայր, ոչ մայր, ոչ տուն, ոչ հայրենիք. գուցէ մարդիկ մեզ էլ տէր դառնան»:

\* \*

Երբ որ Կապուտկողի թագաւորը դրանց տեսաւ, շատ հաւանեց: Աբամէլիքը գլուխը խոնարհեցրեց և կանգնեց նրա առաջին. թագաւորը շատ սիրեց նրան, և հարցրեց. «Որդիք, դուք որտեղից էք, թէ՛նչ ունիք, թէ՛նչ չունիք»:

—Ո՛հ, ոչինչ չունինք, ասացին. ոչ հայր, ոչ մայր և ոչինչ:

Վերջապէս Սանասարը կարգուեց ծխաքարշ տուող (չիբուխչի), իսկ Աբամէլիքը սուրճ տուող (խահուէչի): Եւ այսպէս մի ժամանակ մնացին, և էլի շատ պէտք է մնային, եթէ ուրիշ միտք չունենային իրանց գլխում:

Մի օր Սանասարն ասաց Աբամէլիքին. «Մենք որ այսպէս ծառայենք, երբ պէտք է հասնենք մեր նպատակին. այնքան աշխատեցինք ու մեր շէնքը կիսակատար մնաց: Մեզ տէր է պէտք, որ ժողովուրդ տայ մեզ և տիրանայ: Առաւօտը ոչ դու սուրճ եփիր, ոչ ես ծխաքարշ պատրաստեմ. և չգնանք իշխանին երևալու»:

Թագաւորը քնի մէջ իմացաւ դոցա մտադրութիւնը: Առաւօտը ոչ մէկը երևեցաւ, ոչ միւսը: Թագաւորը կանչեց այդ մարդոց և ասաց. «որդիք, առաջ ես մեթէ

չհարցրի, թէ թէ՛նչ ունիք՝ հայր, մայր, և դուք պատասխանեցիք թէ բան չունիք: Զեր միտքն ի՞նչ է:

Պատասխանեցին. «Թագաւորն ապրած կենայ. ճշմարիտ է՝ հայր, մայր չունինք, բայց եթէ քեզանից ծածկենք, Աստըծուց թէ՛նչ ծածկենք: Մի ամալի տեղ շէնք ենք սկսել, փոքր ինչ վրան աշխատել ենք և թողել եկել, այս տեսակ աղբիւրի վրայ է». ու սկսան պատմել, թէ թէ՛նչ տեսակ աղբիւր է: Թագաւորի սիրտը գուժ ընկաւ դրանց վրայ և ասաց. «Ո՛րդիք, որովհետև այդպէս է, առաւօտը ձեզ միքանի տուն կրտամ, գնացէք ձեր բերդը շինեցէք»: Եւ տուեց դոցա քառասուն տուն: Բայց ի՞նչ տուն . . . ամեն մէկին մի էջ ամենայն քարիքով բարձած և մէկ մէկ էլ ճախարակ հետը դրեց:

\* \*

Առաւօտը վեր կացան, ժողովեցին, կապեցին, բարձեցին իրանց բաները, և ճանապարհ ընկան, գնացին, իջևանեցան իրանց աղբիւրի և իրանց հիմքի վրայ:

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Առաջ այս բերդը շինենք, թէ այս ողորմելի աղքատների բնակարանները»: Աբամէլիքը պատասխանեց. «Առաջ շինենք դոցա տները ու նոր շինենք մեր բերդը. այդ խեղճերը չեն կարող արևի տակ կենալ»:

Եւ սկսան շինութիւնները: Աբամէլիքն այնքան զօրեղ էր, որ տասը տան տեղ էր փորում և տասը տուն շինում, այն միւսն էլ փայտերն էր բերում. և այսպէս բանուածքը երկուսով էին շինում: Երկու եղբայրները չորս օրուայ մէջ քառասուն բնակութիւն շինեցին աւարտեցին: Ապա սկսեցին կիսատ թողած բերդը շինել և վերջացրին: Այնքան ուժեղ էին, որ քարէ սեան քարէ սիւն զարկեցին, կամ արները

քաշեցին և բերդը աւարտեցին:

Աբամէլիքը վեր կացաւ եկաւ իւր թագաւորի մօտ և ասաց. «Մենք քո որդիքն ենք, մեր բերդը շինել և աւարտել ենք. հիմի եկել ենք քեզ մօտ և խնդրում ենք, որ գաս և մեր բերդին անուն դնես»:

Թագաւորը շատ սիրեց և պատուեց Աբամէլիքին, և ասաց. «Լաւ է, որ ինձ չէք մոռացել»: Եւ ելաւ իւր աղջիկը Աբամէլիքին տուեց և որդեգրեց նրան:

Երբ որ աղջիկը պսակեցին, եյան թագաւորը, աղջիկն ու տղան և նոցա հետ էլ քեռի Թորոսը, ձի հեծան և գնացին: Նրանց հետն էլ շատ զօրք ու ժողովուրդ. տարան շատ զարդ ու պարզեւներ, և մեծ հանդէս պիտի կատարէին: Աբամէլիքը նոցա առաջնորդեց և գնացին հասան բերդի տեղը: Աբամէլիքը գլուխ տուեց թագաւորին և ասաց. «Տէր, քո ոտիդ տակն է բերդը»: Թագաւորն ուրախացաւ, հրամայեց դրօշակները բանալ, դարգարուել, փող փչել, թմբուկ հարկանել, պարզեւներ հանել, և մեծ հանդիսով բերդը մտնել:

Երբ որ մօտեցան՝ յանկարծ թագաւորն այնպիսի փառաւոր շքեղ բերդ տեսաւ, որ հիացած մնաց: Չարմացաւ, բայց շուտ էլ բարկացաւ և այնտեղից ձիու գլուխը դարձրեց, որ պիտի յետ գնար, և ասաց. «Դուք ձեր բերդին անուն դրել էք, վերջացրել, հիմի դիտմամբ կանչել էք ինձ, որ փորձէք»:

Թագաւորն ապրած կենայ, ասաց Աբամէլիքը, մէկ մենք, մէկ Աստուած գիտէ, որ այդ բերդին անուն չենք դրել. մենք միայն բերդ շինեցինք կանգնեցրինք»:

«Է՛, ապրիք, լաւ վարպետ ձեռք էք ունեցել: Եւ որովհետեւ անուն չէք դրել, քարէ սեան սիւն էք տուել, հրամայում եմ և դրա անունը պէտք է լինի Սեանսիւն, Սասուն»:

Մէկ ժամանակ մնացին այնտեղ, քիռի Թորոսին էլ

գլուխ կարգեցին, և նա էլ այնտեղ մնաց. թագաւորը դարձաւ իւր տեղը:

\* \* \*

Աբամէլիքը շատ կտրիճ մարդ էր: Մշի վերևով ինչ սարեր որ պատել գօտի են կազմել՝ այդ ամենն էլ զրաւեց: Ել ոչ մէկ կողմը չթողեց, միշտ ձի էր հեծնում, իւր բերդի դռնից դուրս էր գալիս, և որքան ջին ու ջանավար էր տեսնում, բռնում էր, տէր էր դառնում:

Մի օր էլ գնաց մինչև Մուսուլ և այն էլ զրաւեց. այնտեղի թագաւորին սպանեց, առաւ նրա կինը, և մի որդի ունեցաւ: Եւ որովհետեւ իւր անունը Աբամէլիք էր, որդու անունը դրեցին Մսլամէլիք: Աբամէլիքը նստեց Մուսուլ, եղաւ թագաւոր:

Դա այդտեղ թող նստած մնայ:

Բ.

Սանասարը նստած էր Սասուն: Իւր հօր կուռքերը չէին թողնում, որ այդտեղ հանգիստ մնայ, և ելաւ ճանապարհ ընկաւ ու գնաց Բաղդադ իւր հօր ու մօր մօտ: Նրա հայրը լուսամտի առաջ նստած էր, տեսաւ որ իւր որդի Սանասարը գալիս է, ճանաչեց և ասաց. «Է՛, մեռնիմ քեզ, մեծ կուռք, մեծ է զօրութիւնդ, որ քո մատաղը քաշեցիր բերիք. երբեկից միւսն էլ կը քաշես կրբերես»: Իսկ մայրը, որովհետեւ քրիստոնեայ էր, նստաւ արտասուեց իւր որդոց վրայ:

Հայրն առաւ թուրն ու սուրը և գնաց, կանչեց Սանասարին և ասաց. «Ո՛րդի, արի գնանք երկրպագութիւն տուր մեծ կուռքին որ քեզ մատաղ անեմ»:— Հայրիկ, ասաց տղան, քո մեծ կուռքը շատ զօրաւոր կուռք է.

գիշերն էլ չէր թողնում, որ մենք այնտեղ հանգիստ մնայինք. երբեկից միւս մատաղն էլ կըքաշէ կըբերէ»:

Առաւ տղային և մտաւ կռատուն:

Տղան ասաց հօրը. «Հայրիկ, դու գիտես, որ երբ մենք գնացինք՝ պստիկ էինք. մենք քո կուռքի զօրութիւնը չգիտենք. դու խոնարհիր, քո կուռքին երկրպագութիւն տուր, տեսնեմ ինչպէս ես անում, որ ես էլ սովորեմ»:

— Այսպէս, որդեակ, ասաց հայրը և խոնարհեցաւ երկրպագեց:

«Հայրիկ, ասաց տղան, ես քո կուռքն ինչ զօրաւոր էր. երբ որ դու խոնարհեցար՝ իմ աչքերը մթնեցան, չտեսայ, թէ ինչպէս արեցիր»: (Որովհետեւ արխալուխի կոճակները չարձակուեցան՝ այս առաջին անգամ չհասաւ, որ զարկել էր): Եւ յետոյ աւելացրեց. «Հայրիկ, մէկ անգամ էլ երկրպագիր, տեսնեմ ինչպէս ես անում, որ ես էլ անեմ»:

Եւ երբ որ հայրը կրկին խոնարհեցաւ, տղան ասաց. «Ե՛ս հացն ու գինի, Տէր կենդանի», և մի գուրդ իջաւ, և իւր հայր խալիֆային եօթն գազ դետինն ի վայր իջեցրեց: Ապա առաւ գուրդը և մտաւ կուռքերի մէջ, բոլորն էլ ջարդեց, և առաւ արծաթներն ու լցրեց իւր արխալուխի փէշը, բերեց տուեց մօրը և ասաց. «Մամօ, դոցանից զարդեր շինել տուր քեզ համար»:

Մայրը խոնարհեցաւ, երկրպագութիւն արեց և ասաց. «Գոհանամ քեզանից երկնի և երկրի Ստեղծող, որ մեզ այս բարբարոսի ձեռքից ազատեցիր»:

Եւ բերեց Սանասարին պսակեց և նստացրեց հօր գահի վրայ:

Նա մնայ այնտեղ: Մենք գանք Աբամէլիքին:

\* \* \*

Գ.

Աբամէլիքը, որ Մուսուլ էր նստած, իւր զաւակ Մըսլամէլիքին թողեց իւր տեղը, ինքը գնաց Սասուն: Այսպէս անցաւ մի միջոց, մի ժամանակ. դրանից միքանի որդիք ծնուեցան. մէկի անունը դրեց ձեռնափոքրիկ, մեծ տղինը՝ Յանվէգի, մէկինը՝ Չէնով Ովան, մէկի անունն էլ՝ Խոր Գուսան, ու ամենից պստիկինն էլ՝ Դաւիթ:

Այդ տղայոց մէջ ձեռնափոքրիկն ու Յանվէգին ամենեւին բանի պէտք չէին: Իսկ Չէնով Ովանն այնպիսի ձայն ունէր, որ եօթը գօմշի կաշի ձգում էր արեւը՝ չորացնում, նրանով փաթաթվում, որպէսզի եթէ գոռայ՝ ինքը չպատուի և չտրաքուի:

Խոր Գուսանը լաւ երգում էր և իւր խաղով աշխարհք էր զրաւում:

Բայց ամենից աւելի հնարաւորն ու շնորհալին Դաւիթն էր. նրա ուժը ոչ մէկ լեզուով չի պատմուիլ:

Այսպէս բաւական ժամանակ մնաց, ծերացաւ Աբամէլիքը. մի օր նստաւ ինքն իրան մտածեց և ասաց. «Չորս կողմը ինձ թշնամի եղաւ. իմ անկումից յետոյ՝ էլ ո՞վ պիտի տէրութիւն անէ իմ որդոց: Թէ որ անէ՝ միայն Մըսլամէլիքը կարող է, թէ չէ ուրիշ մարդ չի կարող դէմ դնել իմ թըշնամիներին»:

ձանապարհ ընկաւ և գնաց Մըսլամէլիքին: Ծեր ժամանակն էր, ասաց. «Մըսլամէլիք, որդիս, դու էլ իմ զաւակս ես. եթէ ես շուտ մեռնեմ, իմ որդիքս քեզ պահ կըտամ, եթէ դու շուտ մեռնես, ես կըխնամեմ քո որդոց և կըպահպանեմ»: Դարձաւ եկաւ, մնաց իւր բերդում: Մահուան օրն եկաւ, մեռաւ: Մըսլամէլիքն եկաւ նրա որդոց տարաւ, ըստ որում հօր պատուէրը չէր մոռացել:

\* \* \*

Իսկ Սասունը իւր տիրոջ մահուանից յետոյ եօթը տարի սուգ մնաց. ամէն նոր ծնունդին խաղով իմաց կանէին Աբամէլիքի մահը, ամեն մեռնողին եթէ հոգեւոյս ասէին՝ Աբամէլիքին էլ հետը կըլիջէին. ոչ հարսանիք ունէին, ոչ ուրախութիւն:

Քեռի Թորոսն էր վշտացած ամենից շատ, որ աշխարհքը անտէր է մնացել և Աբամէլիքի ժառանգները այսքան ժամանակ գերինների պէս նստած են հեռու իրանից:

Երբ որ գիւղացիք շատ սուգ արեցին, մի օր հաւաքուեցան եկան քեռի Թորոսի մօտ և ասացին. «Քեռի Թորոս, մեր տղայքը ալևորեցան և մեր աղջկերքը պառակեցան. թէ մեր եօթը տարի սուգ անելովը մեր Աբամէլիքը կըկենդանանայ, մի եօթը տարի էլ աւելի պահենք, պատրաստ ենք»:

Քեռի Թորոսը հրաման տուեց դրկեց—հարևաններին և ասաց. «Պսակեցէք ձեր տղաներին ու աղջիկներին, սուգ պահելով ոչինչ չի լինիլ»:

Քեռի Թորոսն ու գիւղացիք նստան գինեխում սարքեցին ու խրախճացին: Միայն քեռի Թորոսն էր անմխիթար: Նա կթխան ձեռն առաւ, մնաց սառած և սկսեց մտածել՝ ոչ խմում է և ոչ վեր է դնում: Թորոսի տղան հեռուից ձայն տուեց և ասաց. Պապօ, դոքա Սասունի գժեր են. հիմա մի անպատիւ խօսք կ'ասեն քեզ, կամ խմիր, կամ դիր գետին ու գնա՛:

Վեր առաւ հայրն ու տղին ասաց. «Հէյ անպիտան որդի, ես այստեղ նստեմ կերուխում անեմ, Մսլամէլիքը գայ մեր երեխաներին տանի, Աբամէլիքի տղաներին քշէ տանի, ես այստեղ կերուխում անեմ: Ամօթ չէ մեզ. հաց գինի ու Տէր կենդանի, քան այս կթխան աւելի խմած չլինիմ. ելնեմ երթամ իմ երեխաներին երևամ»:

\* \* \*

Քեռի Թորոսը Սասունից խփեց ու գնաց Մուսուլ. ինքը գլուխ տուեց, Մսլամէլիքը գլուխ տուեց ու նստան: Թորոսն ասաց. «Ահա ես ու դու՝ դատաստան Աստրծու: Իրաւ է, դու և Աբամէլիքը պայմանագիր էք եղել, բայց գերին գին ունի, տիրոջ կըհասնի»:

Գնացին Աստրծու դատաստան. երեխաները Թորոսին վիճակուեցան:

Մսլամէլիքի աչքը շատ էր վախենում այդ տղաներից, ուստի քեռի Թորոսին ասաց. «Արի բեր այդ տղաներին անցկացրու իմ թրի տակով, յետոյ առ ու գնա՛»:

Քեռի Թորոսն եկաւ յայտնեց տղաներին:

Ցանկէպին ասաց. «Գնանք անցնենք նրա թրի տակով և թողնենք երթանք»: Միւս երկուսն էլ նոյնը ասացին: Իայց Դաւիթը քար կտրուեցաւ և ասաց. «Սպանում է թող այսօր սպանէ, որ մարդիկ ասեն, թէ մի երեխայ է սպանել: Ես նրա թրի տակով չեմ անցնիլ. այսպէս է անում, որ էգուց ես մեծանամ սուր չբարձրացնեմ իւր վրայ»:

Քեռի Թորոսը ահից դոցա ժողովեց միատեղ, որ տանի թրի տակով անց կացնէ: Դաւիթն ընդգիմացաւ, կանգնեց և չի գնում թրի տակը: Քեռի Թորոսը բարկացած բռնեց Դաւիթի օձիքը և հրեց, որ անցնի թրի տակով: Դաւիթը չգնաց թրի տակով, այլ կշտով անցաւ, և իւր մեծ բուժը քարի վերայ քսուեցաւ՝ կրակ դուրս ելաւ նրանից: Երբ որ Մսլամէլիքն այս նկատեց՝ ասաց. «Դա որ դեռ փոքր է՝ այսքան է, որ մեծանայ՝ ինչ կը լինի: Եթէ ինձ մի վնաս պատահի՝ դրանից կը լինի»:

Քեռի Թորոսն առաւ տղերանց և Սասուն եկաւ: Ամենին պաշտօնի կարգեց, ինչպէս կըվայելէր. Ցանկէգուն բերդի մէջ թագաւոր դրեց հօր տեղ, և Դաւիթին՝ որ ամենից պստիկն էր՝ հորթապահ արեց:

\* \* \*

Պ.

Դաւիթն էր, որ մի դազանակ զարկելով՝ քառասուն հորթ էլ հետը գլորում էր: Զօր շատ ունէր, բայց հորթապահութիւն լաւ չսովորեց:

Մի օր էլ քշեց հորթերը հանեց սարի գլուխը, տեսաւ որ հորթարածի մէկը իւր հորթերին անիծում է: Դաւիթն այս կողմից գնալով՝ ասաց. «Ա՛յ մարդ, դու քնձ ես անիծում. կաց դամ մի դազանակ տամ գլխիդ, որ սասանես»:

Իսկ նա պատասխանեց Դաւիթին. «Գլխիդ արևիդ մեռնիմ. ես էլ քեզ պէս քո հօր գիւղի հորթարածն եմ, և սոքա ռամկի հորթերն են»:

Եթէ այդպէս է, ասաց Դաւիթը, արի եղբայրանանք. միայն ես հորթատարի ճիշդ ժամանակը չգիտեմ; իմ հորթերն էլ դու պահիր. երբ որ գնալու ժամանակը լինի, իմ առաջը քշիր, որ տանեմ նրան»:

Եւ այդ օրը ճիշդ ժամանակին հորթերն առաւ ու եկաւ գիւղ: Ուրախացաւ քեռի Թորոսն ու ասաց. «Ո՛րդի, ահա այդպէս աչքաբաց եղիր, ամենայն օր ժամանակին գնած ու արի»:

Դաւիթն ասաց. «Քեռի, այդ իմ շնորհքը չէր, ես մի եղբայր եմ բռնել, ամենայն օր պիտի պահէ իմ հորթերը, ես էլ պէտք է լաւ տէրութիւն անեմ նրան»:

Մի օր Դաւիթի ընկերն. ուշացաւ. Դաւիթը շատ նեղացաւ: Դու մի ասա, այն տղայի գիւղում ցասման ժամ պատարագ էր, տղան էլ այդ պատճառով ուշացել էր: Եւ երբ որ եկաւ՝ Դաւիթն ասաց նրան. «Իմ ձեռքիցս այս օր քնչպէս պէտք է ազատուիս»:

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արևիդ մեռնիմ, մի նեղանար: Ես քո ահիցդ էլ չմնացի մինչևի վերջ. և այն ցասման ճաշից մի դդալ էլ չկերայ, քշեցի հորթերն ու

եկայ: Բայց քնչ անեմ, որ իմ բախտիցս էլի քիչ ուշացել եմ:

Դաւիթը զթացաւ նրա վրայ, որ ճաշ չէ կերել, և ասաց. «Դու այդտեղ նստիր, ես գնամ քո ճաշն առնեմ բերեմ»:

\* \* \*

Դաւիթը դրեց կօպալը ուսի վրայ և գնաց: Գնաց մտաւ գիւղացոց մէջ. տեսաւ որ հարիսէքը բոլորը հանել դրել են կալում և քահանայք եկել օրհնում են: Դաւիթը կօպալը ձգեց մի չորս կանթանոց լիքը պղնձի մէջ և ուսի վրայ շալկեց: Զարմացան այդտեղի ժողովուրդն ու քահանաները: Նոցանից մէկն ասաց. «Սա մեր պղինձը տարաւ է»:

Քահանան ասաց. «Թէ Աստուած կըսիրէք, ձայն մի հանէք. դա Սասունի գփերիցնէ. որ դառնայ մեզ ջարդ ու փշուր կանէ. թող տանի՝ իւր գլուխն ուտի»:

Իսկ Դաւիթը կերակրով լիքը պղինձը ուսին՝ ընկերին է բերում: Տեսաւ ընկերը նստած լաց է լինում:

«Հէ, հէ, ասաց զուարճանալով, գիտեմ ինչի ես լաց լինում. ճաշդ բերել եմ, աղ ու եղ չեմ բերել, նեղանում ես: Արի հիմա կեր ճաշդ, երեկոյին էլ վրէժն աղ ու եղ կեր, էլ պակաս ոչինչ չես ունենայ»:

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արևիդ մեռնիմ. ես աղն ու եղը քնչ եմ անում: Քառասուն աւազակ դուրս եկան մեր հորթերը փարան գնացին:

«Դու այստեղ կաց, պատասխանեց Դաւիթը, այս տեղի հորթերիդ նայիր. ես գնամ մէկէլները դարձնեմ»:

Եւ ընկաւ հորթերի ետևն ու գնաց. հետքը բռնեց և մի այրի դռան առաջ կանգնեց: Այդտեղ Դաւիթը

այնպէս պինդ գոռաց, որ միջի դեւերի վրայ սարսափ ընկաւ (ինչպէս որ Քրիստոսի ձայնն ընկաւ դժոխքի մէջ և սատանէքը սասանեցան): Այդ աւագակներէ մեծն երբ որ լսեց, ասաց. «Վա՛յ մեզ, դա Դաւիթն է՝ Աբամէլիքի տղէն, ելէք գլուխ տուեցէք և ծառայեցէք, որ մեզ չսպանէ»:

Մէկ-մէկ դուրս եկան, և Դաւիթն էլ մէկ-մէկ կօպալ զարկեց, այնպէս որ քառասունի գլուխը թռցրեց, զիակը թողեց մնաց: Այդ քառասունի էլ ականջները կտրեց և տարաւ այրի մօտ միքարի տակ պահեց: Այրի դուռը կօպալով կրընկահահան անելով՝ ներս մտաւ և տեսաւ, որ մի կոյտ ոսկի է, մի կոյտ արծաթ. աշխարհքի բարուժիւնն ու հարստութիւնը այնտեղ էր: Քանի որ իւր հայրը մեռել է, և ինչ որ աւերութիւն են արել դոքա, բոլորն այդտեղ էր լցրած:

Մի ուրիշ դուռ բաց արաւ և տեսաւ այնտեղ մի ձիու քուռակ կապած: Ինքնիրան խօսեց և ասաց. «Քեռի, այս գանձը բոլորը քեզ, բայց այս անասունն ինձ լինի. տալիս ես՝ տուր, չես տալիս՝ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»: Ինքը դարձեալ իւր գլխին պատասխանեց. «Ո՛րդի, գանձն էլ քեզ, անասունն էլ քեզ. ես թնչ եմ անում»:

Դարձաւ, տեսաւ, որ քառասնականթ մի պղինձ դրուած է օճախի վրայ, քառասուն հորթեր էլ մէջը: Կօպալը մտցրեց կանթերի մէջ և պղինձը վերցրեց. ջուրը դատարկեց և հորթերի ոտքերն էլ մէջը թափեց, շալակեց ու գնաց:

Եկաւ ընկերի մօտ. առաւ նրան ու մնացած հորթերը և դարձաւ եկաւ գիւղը: Կանչեց հորթերի տէրերին, աչքերը լաւ խոտուեց նրանց վրայ և գոռաց. «Եթէ այս իմ եղբօր մի մատի չափ վարձը կտրէք, վայն եկել է ձեզ տարել: Այս պղինձն էլ ձեզ լինի, ծախեցէք և թող ձեր հորթերի գինը լինի»:

Ինքն էլ ջոկեց իւր հորթերն ու կէսօրին տուն եկաւ քեռի Թորոսին ասաց. «Ինձ, առ քսան ջորի և երթանք այնքան ապրանք բերենք, որ դու էլ ուտես, քո եօթը պորտն էլ. մինչև երբ ես պէտք է հորթարած մնամ»:

Առան ջորիքն ու գնացին: Գնացին մօտեցան այրին. քեռի Թորոսը տեսաւ, որ դեւերը թափուած են այրի դրուան առաջը և ուռել են մի-մի բլրի չափ: Երկիւղեց իւր ջորին միւս ջորիներից բաժանեց ու փախաւ: Դաւիթը ծիծաղեց ու ձայն տուեց. «Տնակեր, ես դոցա ողջերից չվախեցայ, դու մեռելներից թնչ ես փախչում»: Քեռի Թորոսն ասես իսկի լսում է նրա խօսքերը. մի բերան փախչում է: Դաւիթը էլի յետևից ձայն է տալիս. «Թէ չես հաւատում, դարձիրքո յետևը, քարի տակ նայիր, բոլորի ականջները այդ տեղ եմ թափել»:

Քեռի Թորոսը որ տեսաւ, դարձաւ առաւ ջորիներն ու մտաւ այրը. ինչ կար չկար ժողովեցին, բեռներ բարձեցին:

Դաւիթն ասաց. «Քեռի Թորոս, այս ապրանքը բոլորը քեզ, իսկ այս անասունն ինձ. տալիս ես՝ տուր, չես տալիս՝ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»:

Նա էլ պատասխանեց. «Ո՛րդի, ապրանքն էլ քեզ լինի, անասունն էլ, ես թնչ եմ անում»:

Երբ որ քեռու բերանից խօսքն առաւ, հեծաւ քուռակը և քշեց մէկ այս կողմ, մէկ այն կողմ (Ինչ քուռակ, նրա գորութիւնը ոչ մէկ լեզու նկարագրել չի կարող):

\*\*\*

Այսպէս ապրանքով, բեռներով եկան Սասուն: Դաւիթն այնուհետև հորթերից ձեռք վեր առաւ. մի լաւ բազէ քաւաւ և արտերն ընկաւ՝ որս անելու:

Մի օր եկաւ մի աղքատի հանդիպեց, որ եօթը հոգուց բաղկացած մի ընտանիք ունէր, և միայն եօթը կորի կորեկ. նոցանից չորսը աւերեց, մնաց երեքը:

Տեսնողներից մէկը եկաւ լուր բերեց աղքատ ծերունուն և ասաց. «Քո տունը չքանդուի, վեր կ'սկսեմ գնա արտդ տես, թէ չէ գիշերը Դաւիթը կըգայ մնացած երեք կորին էլ կաւերի»:

Խեղճ ծերունին առաւօտեան լուսաբացից առաջ մինչև աղօթք արեց՝ վեր կացաւ գնաց, տեսաւ որ արտը փչացրել է: Դաւիթն էլ բազէն ձեռքին, քուռակի վրայ հեծած, եկաւ: Այդտեղ ծերն անիծեց Դաւիթին և ասաց. «Դու Աստուծոց բնաւ չես վախենում, որ իմ կորեկի վրայ ես բանեցնում քո կորչուածիւնը. ես եօթը հոգի ունիմ պահելու և նոցա համար եօթը կորի կորեկ. չորսը փչացրել ես, մնացել է երեքը: Եթէ իրաւ կտրիչ ես, գնա քո հօր կալուածքը լետ առ, որ Ծծմակայ գլխից սկսած մինչև Սեղանսարի գօտին է գնում և Սուլամէլիքը գրաւել ուտում է: Գնա՛ այն ան. թնչ ես կտրիչ գառել իմ գլխիս»:

— Ծերունի, ասաց Դաւիթը. ինձ մի անիծիր, ան մի բուռն ոսկի և քո ապրուստը հոգացիր: Եւ սպանեց բազէին:

Դաւիթը նոր իմացաւ, որ ինքը շատ բանից զրկուած է եղել մինչև հիմա և ասաց. «Քեռի Թորոս, վեր կաց իմ հօր գուրգն ու նետը տուր ինձ. իմ հօր կալուածքը օտարներն ուտում են և դուք ինձ ոչինչ չէք ասում»:

Քեռի Թորոսն ելաւ գնաց Յանվէզու մօտ, ուղեց նորա հօր գուրգն ու նետը: Յանվէզին չտուեց: Դաւիթը մի անգամ էլ դարձրեց ու ասաց. «Տալիս ես՝ տուր, չես տալիս՝ կը գամ կը մարմնեմ, գլուխդ կ'երթայ, գիակդ կ'լմնայ»:

Յանվէզին վախից տուեց իւր հօր գուրգն ու նետը, և քեռի Թորոսը բերեց տուեց Դաւիթին:

Այդ գիշեր Դաւիթը քնեց, մի երազ տեսաւ: Երբ որ զարթեցաւ, առաւ քառասուն երինջ ու գնաց սուրբ Մարաթուկի բարձր մատուռը: Երինջները մատաղեց, շատ լաց եղաւ և երեսն 'ի վար աղաչեց Աստուծուն. Աստուած էլ նրան սուրբ Նշան ուղարկեց (հիմա էլ կայ այդ ս. Նշանը): Նա համբուրեց սուրբ Նշանը, դրեց աջ ծոցը, պահեց, մի սանր էլ ձախ ծոցը պահեց:

Ե.

Սուլամէլիքը լսեց, որ Աբամէլիքի տղէն հասակն առել է և վեր է կացել գալիս է իւր վրայ կուր: Իւր կողմից էլ զօրք ժողովեց և խօլբաշուն յանձնեց: Սա վեր կացաւ, որ գայ Մարաթուկ Դաւիթի վրայ: Տեսաւ, որ ճանապարհի վրայ կանայք կանգնած, հետաքրքիր նայում են նրան և նրա զօրքին: Նա ասաց նոցա. «Ուրախացէք, պար եկէք մինչև իմ գալստ»:

Նորա պատասխանեցին. «Մենք թնչ ասենք և խաղանք. մենք չգիտենք թնչ ուրախութիւն պէտք է տեսնենք, որ այն ասենք ու երգենք»:

Խօլբաշին ասաց. «Անպիտաններ, դուք չէք իմանում, թէ շուտով պէտք է տեսնէք իմ յաղթութեան փառքը. ահա կարճիդ էլ, երկարիդ էլ սովորեցնեմ, թէ ինչպէս պէտք է գովէք ինձ, երբ ես փառքով վերադառնամ»:

Կարճ կընանիք երկանք աղան,  
Երկայնները ուղտեր բառնան.  
Մեր Խօլբաշին կ'երթայ Սասուն,  
Ամուլ եզներ բերէ լծան,  
Կարմիր կովեր բերէ կլթան.

Կրգայ գարուն, կրգայ, և մենք

Իւղ ու չորթան շատ կըշինենք:

Մէկ էլ տեսաւ, որ կանայք սկսան այդ երգել և խաղալ: Իսկ ինքը առաւ զօրքն ու եկաւ մտաւ Մարաթուկի բակը լցրեց:

\* \*

Այդ Մարաթուկի քահանայի աղջիկը Դաւիթի հարսնացուն էր. նա եկաւ լուր բերեց Դաւիթին և ասաց. «Դաւիթ, գլխիդ արևիդ մատաղ, վեր կաց տես, որքան զօրք է մտել բակի մէջ. անթիւր զօրք է»: Աղջիկն ասաց, ու գնաց և յետևից գրան փակը քաշեց, որ ոչ ոք չիմանայ իւր արածը:

Դաւիթը թուաւ ելաւ և կանչեց. «Ե՛ս հաց գինի, Տէր կենդանի». և զօրքի մարդերին բռնեց, գլխները մարմնեց, ամենի դիակը գցեց պարսպից դուրս, գլուխը մնաց բակի մէջ: Խօլբաշուն էլ բռնեց, նրա ատամները հանեց և շարեց ճակատին, և նիզակն էլ շան խառանի պէս շինելով՝ կախեց վզից, ինչպէս որ շան վզիցն են կապում և ասաց. «Դէհ գնա, լուր տուր Մսլամէլիքին. թէ էլի մարդ ունի՝ թող ժողովէ իւր կշտին, հիմա ես եմ գալիս նրա դէմ»:

Խօլբաշին այսպէս խայտառակուած էլի այն կանանց միջով անցաւ, որոնք իրանց խաղն ու խնդումը շարունակում էին: Բայց երբ որ նրան տեսան՝ նրանցից մէկը վերկացաւ և ասաց.

«Խօլբաշի, Խօլբաշի ջան,  
Մեզնից գնացիր քանց գայլ գազան,  
Հիմի եկար քանց շուն վազան.  
Վիզդ է նիզակ քանց շան խառան,  
Բերանդ է բաց քանց պատուհան,  
Բերնիդ փրփուրն, ասես թէ թան,  
Ճանճեր ունի շարան - շարան»:

Խօլբաշու նեղը որ եկաւ՝ պատասխանեց.

«Տ՛օ անգգամ, լեզուդ կտրիր.

Հէնց գիտեմ թէ Սասուն դաշտ ու գուրան էր,

Զիմացայ թէ քարքարոտ ու կապան էր.

Այնտեղ մարդիկ չեն, այլ դևի գաւակներ,

Նետեր ունին քան ձիթհանքի գերաններ,

Մէկ որ խփեն՝ ճեղք կըճրղեն պատուհան.

Ինչ մարդ տարայ, դիփ էլ եղան հոգեհան:

Գարուն՝ որ ջուր ուռչի գառնայ մեծ հեղեղ՝

Մեծ ու պստիկ շատ կըժողուէ միատեղ—

Այն ժամանակ ձեզ շատ շինէք չորթան, եղ:

\* \*

Այժմ Դաւիթն ինքը վեր կացաւ և գնաց Մսլամէլիքի վրայ. այն ժամանակ եկաւ, երբ որ նա արդէն ահագին զօրք ժողովել նստել էր Սեղանսարի գօտու վրայ. զօրքը բազմաթիւ սպիտակ վրանների մէջ էր գետեղուած, նոցա մէջ ամենից մեծն ու երևելին մէջ տեղի կարմիր վրանն է: Դաւիթն ասաց. «Ուխտ եմ գնում, որ մինչև կարմիր վրանի տակ եօթն օր բրընձի փլաւ չուտեմ՝ կռիւ չանեմ»:

Եւ այս ասելով՝ այդտեղից պտըտեց արևպատի կողմից համարձակ լարձակուեցաւ. եկաւ և վրանի դէմուդէմ կանգնեց: Երբ որ այն զօրքը այս ձիաւորներին տեսաւ՝ ահի մէջ բռնուեցաւ և վախեցաւ: Մէլիքը հարցրեց. «Ի՞նչ մարդ ես»:

— Ես արևպետոց թագաւորի տղէն եմ, ասաց Դաւիթը. ձեզ օգնելու եմ եկել:

Մէլիքը վրան զարկեց՝ եօթն օր միասին հաց կերան. ութերորդ օրը ելաւ Դաւիթն իւր ձին հեծաւ, երկու անգամ յետ ու առաջ չափ ձգեց, գնաց եկաւ, ասաց. «Վեր

կաց, ես եկել եմ քեզ հետ կռիւ անելու. մինչև էրբ պէտք է իմ հօր կալուածքը ուտես»:

Մսլամէլիքը նոր իմացաւ, թէ ում հետ կերուխում արեց, գլուխը շարժեց և հրամայեց զօրքին, որ ոտքի կանգնի:

\* \* \*

Կռիւն սկսեցին. Գաւիթն իւր կարճ աղօթքն ասեց. «Հացն ու գինի, Տէր կենդանի»:

Այս ժամին Թորոսն էլ հասաւ: Նա լսել է սոցա կռիւը, մէկ բարտի ծառ քոքեհան է արել, ուսին է դրել, և գալիս է: Եկաւ ու կանգնեց ձորի գլխին, իսկ նոքա ձորի մէջ կռիւ են անում: Եթէ մէկը փախչել է ուզում և վեր է բարձրանում, Գաւիթը գոռում է. «Քեռի Թորոս, դու ձորի՞ր, ես ձորթփեմ»: Ետին ջարդեցին, շատին կոտորեցին, զօրքը նուազեց:

Այս միջոցին զօրքի մէջ տրտունջ ծագեցաւ. ոտքի կանգնեցին և բողոքեցին. «Եթէ դուք քաջեր էք, դուք պէտք է միայն երկուսովդ մենամարտէք. և յաղթուածիւնը յաղթողին լինի»:

Երկու եղբայրները համոզուեցան այս խօսքով, տեսան որ մարդկանց ի գուր կոտորում են: Եկան կանգնեցին մէջտեղը. մէկն ասում է՝ «Դու նստիր, ես զարկեմ». միւսն ասում է՝ «Ձէ, դու նստիր»: Վերջապէս համաձայնուեցան, որ փոքր եղբայր—Գաւիթը նստի:

Գաւիթը քաշեց վահանը գլխի վրայ, բռնեց Սուրբ Նշանը վահանի տակ ու նստաւ: Մսլամէլիքը երեք ժամի ճանապարհ հեռացաւ և այնտեղից շտապով եկաւ, զարկեց մի գուրդ ու ասաց. «Հող ես, հող դառնաս»: Իսկ Գաւիթը պատասխանեց. «Հաւատամ խոստովանիմ, բարձր Մարաթուկի

Ս. Նշան. քեզ պէս զօրաւոր պաշտպանի տակ, ես այնպէս եմ, իբրթէ կանաչ կարմիր վրանի տակ նստած՝ հանգիստ բըրնձի փլաւ եմ ուտում»: Մսլամէլիքն այսպէս երեք անգամ զնաց եկաւ զարկեց ու ասաց. «Հող ես, հող դառնաս». Գաւիթն էլ երեք անգամ իւրը պատասխանեց:

\* \* \*

Այս անգամ նստելու կարգը Մսամէլիքին եկաւ, բայց նա յամառեցաւ, կանգնեց և չուզեց նստիլ: Բոլոր զօրքը մեղադրեց նրան թէ անօրէն է վարվում, այնպէս որ ամօթից վերջապէս եկաւ, վահանը բռնեց գլխին և նստաւ: Այս միջոցին Մսլամէլիքի մայրը Գաւիթին զրպարտել ուզեց և ասաց. «Գաւիթ, գլխիդ արևիդ մատաղ, չէ որ դա քո եղբայրն է. մի զարկիր, մեղք է»: Գաւիթի սիրտը շատ խոցուեցաւ և պատասխանեց. «Այ անօրէն, ինչո՞ւ մինչև հիմա չէիր ասում, թէ քո եղբայրն է, երբ սա էր ինձ զարկում: Բայց թող քո խօսքը լինի. ես պէտք է երեք անգամ զարկեի՝ մէկ հարուածը նուիրում եմ Աստծուն, մէկը բաշխում եմ քեզ, որ նորա մայրն ես. իսկ իմ բաժին միայն երրորդը պիտի զարկեմ, կամ մեռնի կամ մնայ»:

Գնաց երկաւ Գաւիթն և իւր գուրգն այնպէս զարկեց, որ Մսլամէլիքին եօթն գազ գետինն իջեցրեց, և Մուսուլին տիրելով՝ նստեց թագաւորական գահը:

Դա մնայ այդ տեղ:

Ձ

Գաւիթի քաջութիւնների համբաւը ամեն տեղ տարածուեցաւ: Կաղզուանի ամիրան մի աննման աղջիկ ունէր, անունը Խանդուզ խանում: Սա էլ լսելով Գաւիթի

քաջագործութիւնները, շատ ոսկի, արծաթ տուեց մէկ աշուղի և ասաց. «Գնա՛ իմ գովասանքն արա Դաւիթին, ասա՛ որ շատ իշխաններ են ուղում ինձ առնել, բայց միայն Դաւիթին եմ ընտրել, նա պէտք է լինի իմ ամուսինս. եթէ քո խաղը նրա սիրտը գրաւէ և նա գայ ու մենք իրար առնենք, այս ոսկին ու արծաթը քեզ վարձ լինի»:

Աշուղն առաւ իւր դամբուռը, ոսկու արծաթի լարերը քաշեց վրէն, գնաց Սասուն իւր աննման խանութի գովքը հռչակելու: Եկաւ բարձրացաւ Յանվէգու բերդը, կարծելով թէ Դաւիթն այն տեղ է նստած: Նստաւ և երգեց Յանվէգուն խանութի զեղեցկութիւնն ու իմաստութիւնը:

Յանվէգին այս լսելով՝ բարկացաւ և իւր պահապաններին հրամայեց. «Տղայք, վեր կացէք ծեծեցէք սրան և դուրս արէք. դա եկել է, որ իմ եղբօրը խաբէ տանէ»:

Խեղճ աշուղին ծեծեցին և տարան ձգեցին ճանապարհի վրայ: Երեկոյեան հօտաղներն իրանց եզները հեծած՝ գիւղն էին գալիս: Անցնելով այդտեղից, ուր աշուղն էր ձգուած, մէկի եզը խրտնեց և վրայի նստողը վայր ընկաւ: Նրան որոնելով՝ գտան և աշուղին: Աշուղը լաց եղաւ, աղաչեց, որ «զնեն և հարցրեց. «Այդ բերդի մէջ նստողն ո՞վ է»: Եւ նրանք պատասխանեցին. «Դա Յանվէգին է, իսկ նրա եղբայր Դաւիթը այդտեղ չէ, այլ Մուսուլումն է»

Աշուղը ոսկի հանեց տուեց այդ հօտաղներին. նոքա ժողովեցին նրա դամբուռի կտորտանքը, տուեցին իրան և ճանապարհը ցոյց տուին:

Աշուղը գնաց Մուսուլ և Խանդուզ խանութի սիրտը յայտնեց Դաւիթին: Դաւիթը երկար լսեց նրա խաղը, շատ հաւանեց խանութի գովքը, շատ պարգև տուեց աշուղին և ասաց. «Դու գնա՛, ես կրգամ»:

Աշուղը դարձաւ, բոլորը պատմեց խանութին:

Դաւիթը Մուսուլից ճանապարհ ընկաւ և ուղղակի եկաւ Սասուն և այնտեղից Ծծմակայ քիթը, ուր ճանապարհի վրայ մի գուլթան տեսաւ. արձակեց գուլթանի տաւարը և մէկ կողմ քշեց. իսկ ինքը շղթան ձեռքն առնելով նրստաւ ձին: Այս կողմից քաշում էր գուլթանը՝ հանում էր լերան գլուխը և այն կողմից քաշում՝ վայր էր բերում ցած. և այսպէս Սև սարից գլխիվայր եկաւ մինչև Մառնիկ գիւղի գլուխը: Եկաւ տեսաւ, որ մի գոմէջ տղմից դուրս եկաւ և կանգնեց առաջը: Դաւիթը, որ ամենևին այդպիսի բան չէր տեսել՝ գուրզը ուղղեց, որ զարկի գոմջին:

Այն կողմից մի հօտաղ դուրս եկաւ, որ գոմջին հայհոյում էր: Դաւիթը կարծելով, թէ նա իրան է հայհոյում, ասաց. «Ո՛րդի, ես քեզ թնչեմ արել, որ ինձ հայհոյում ես»:

— Քեզ հետ ո՞վ է, եղբայր, պատասխանեց հօտաղը. դու Սասնոյ գժերից հօ չես, որ աշխարհք չես տեսել. ես իմ գոմջին եմ հայհոյում:

«Ո՛րդի, ինչո՞ւ ես նեղանում. ամօթ բան է միթէ, ես այդպիսի բան չեմ տեսել. մեզանում այդպիսի բանին չեն հայհոյում: Դրանից շատ կայ ձեր երկրում»:

Եւ նա ասաց. «Արի քեզ ցոյց տամ»:

Գնացին դաշտը, ուր մի գուլթան էին լծել գոմէշներով և քաշում էին: Դաւիթը տեսաւ, որ գոմէշները տապից լեզուները դուրս են հանել ու գուլթան են քաշում: Խղճաց նոցա, արձակեց գոմէշներն և տարաւ լցրեց լիճը. իսկ մաճկալն անիծեց նրան:

«Մաճկալ, ասաց Դաւիթը, ինձ մի անիծիր. այդ գուլթանի շղթան ինձ տուր»: Բռնեց շղթան, մաճկալը կանգնեց վրան և Դաւիթը քաշեց գուլթանը իննը պտոյա տարաւ բերաւ:

«Այդ քո հնարը չէ, ասաց մաճկալը, իջիր ձիուց և

ապա քաշիր, տեսնենք քո շնորհքն է, թէ ձիունը: Դաւի-  
թը ձիուց իջաւ, տասը պտոյտ էլ քաշեց առանց ձիու:  
Այս անգամ մաճկալն ասաց. «Դաւիթ, քեզ մատաղ  
լինիմ. կէս օր է, նստիր հաց կեր և այնպէս գնա»:

— Չէ, կերթամ, ասաց նա, թող ձեր տղայքը հաց ու-  
տեն. եթէ ես ուտեմ՝ նոցա էլ բան չի մնալ:

Վերջապէս նստաւ. և երբ որ հաց դրեցին, Դաւիթը  
բոլոր հացերը ժողովեց և մի անգամից բերանը դրեց:  
Հօտաղի բերանը բաց մնաց ու ասաց «Եաման, վեր կացէք  
փախէք, թէ չէ դա մարդ էլ կուտէ»:

Դաւիթն ասաց. «Գուժան քաշողն իհարկէ հաց կ'ու-  
տէ, հապա քնչ կ'անէ»: Եւ այդտեղից ճանապարհ ընկնելով՝  
գնաց Խանդուղ խանութին:

Է.

Դաւիթը գնաց հասաւ Խանդուղ խանութի պալատի  
դուռը: Այդ այն պալատն է, ուր որ Խանութի ուղողները  
գալիս են և իջեանում են: Դռանը միշտ կանգնած է մի  
մարդ, որ ձեռին թոփուղ ունի: Դաւիթը հարցրեց նրանից.  
«Այ տղայ, անուճդ քնչ է»:

— Իմ անուճս Գորգիդ է, պատասխանեց նա:

«Գորգիդ, ես Դաւիթն եմ, եկել եմ Խանդուղ խանութին  
ուղելու. քեզ շատ հաւանեցի, և երբ որ Խանութին առնեմ,  
քեզ էլ ինձ քաւոր կ'անեմ»: Գորգիդը գլուխը շափեց և  
ասաց. «Ուր է որ մեր աննման Խանութը մարդ ուղէ. շատ  
քաջ մարդիկ են գալիս նրա ձեռքը խնդրելու, բայց ոչ  
ոքին չէ հաւանում, և միշտ ասում է, թէ իմ սրտի ուղածը  
ուրիշն է»:

Դաւիթը հարցրեց. «Գորգիդ, ո՞վ կայ ներսը»:

— Շրբբզան - Խորասական, Հրմզայ - Լօռայ մեծանուն

իշխանների հարսնախօսներն են եկել, ասաց Գորգիդը:

«Իմ ձին դու քաշիր կապիր, ասաց նրան Դաւիթը:

Գորգիդը քաշեց կապեց:

Յետոյ Դաւիթը հարցրեց. «Այդ քնչ թոփուղ է, որ  
տուել են քո ձեռքդ, տուր տեսնեմ»: Եւ ձեռքից թոփուղն  
առնելով ձգեց, որ մինչև այսօր դեռ էլի անվերջ գնում է:  
Գորգիդը նոր իմացաւ, թէ ինչ մարդու է պատահել:

Դաւիթն ասաց. Գաւոր Գորգիդ, այժմ ներս գնանք  
կեր ու խում անենք:

Ներս գնացին, ուր որ հարսնախօսները նստած էին.  
Դաւիթը նստաւ. յոգնած էր և քաղցած: Այն մարդիկն իմա-  
նալով թէ Դաւիթն ով է և թէ ինչու է եկել՝ ուղեցին  
նրան քնացնել և սպանել: Նոքա վերցնում էին մէկ-մէկ  
կթղայ գինի և Դաւիթին էին տալիս. Դաւիթի ծարաւը չէր  
կտրվում, և էլ չհամբերելով՝ մի անգամից վերցրեց գինու  
տաշտը և բոլորը խմեց ու ասաց. «Իէ հիմի սուսացէք.  
«Անուշ եղաւ»:

Բայց գինին Դաւիթի գլուխն ընկաւ և Դաւիթին տա-  
րաւ: Երբ որ Դաւիթն այսպէս է լինում, և գինուց գլու-  
խը խոնարհեցնում ու դնում է գետնի վրայ, այն մարդիկը  
հանում են իրանց թրերը, որ զարկեն, իսկ երբ որ Դաւիթը  
գլուխը վեր է բարձրացնում, նոքա թրերը դնում են ծրնկ-  
ների տակ: Միանգամ էլ որ այս կրկնուեցաւ՝ քաւոր Գորգի-  
դը կանչեց. «Սանահայր Դաւիթ, այստեղս վնաստուն է,  
Վրաստան չէ»:

Դաւիթը երբ որ այս լսեց, կանչեց. «Շուտ արա դուռը  
բռնիր»:

Բայց մինչև Գորգիդը դուռը կրփակէր, այդ մարդիկն  
ելան փախան, մէկ-մէկ ապտակ էլ տալով Գորգիդին:

Դաւիթը հա թէ հանգստացաւ:

Որ զարթեցաւ Դաւիթը, կանչեց Գորգիզին և հիմի հարցրեց. «Խանուսին որտեղ տեսնենք»:

— Դարպասի բախչի մէջ, ասաց Գորգիզը. այսօր կիրակի է, նա այնտեղ կըլինի. քսան նաժիշտներ նրա առաջից կըլինին և քսանն յետևից. գնանք հեռուից տեսնելու:

Սովորութիւնն այնպէս էր, որ Դաւիթն առաջ հօրը պէտք է տեսել էր. բայց նա ու Գորգիզը գնացին կպան պարտիզի պատին և կանգնեցան: Նաժիշտները մէկ-մէկ եկան և անցան. եկաւ և Խանդուդ խանուսը: Դաւիթը չհամբերեց մինչև հօր տեսութեան, ձեռքը ձգեց խանուսի վզին և երեք համբոյր առաւ նրանից: Խանուսը այս անգամ ոչինչ չխօսեցաւ. գիտէր որ իւր Դաւիթն է: Բայց Դաւիթը չորրորդեց համբոյրը. այս անգամ Խանդուդը բռնեց Դաւիթի փողպատը, զարկեց նրան պատին, և Դաւիթի քթից արիւն վազեց:

Դաւիթը ամեն տեսակ ցաւի կսկիծը կը տանէր, բայց նրա սիրտը շատ խօցուեցաւ, որ մէկ կին այսպէս անպատիւ արեց իրան: Սաստիկ բարկացաւ և այդտեղից դարձաւ որ ձի նստէ. ուխտեց իւր ս. Նշանին և ասաց. «Քաւոր Գորգիզ, քաշիր ձիս, որ այս քաղաքն աւերեմ»:

Գորգիզը աղաչելով ասաց. Աստուած սիրես, հիմա թող մնայ, մուսն է. լուսին վեր կաց աւերիր գնա»:

Դաւիթը թէև համբերեց, բայց մահճի մէջ պառկած ժամանակ բարկութիւնից չի կարողանում քնել. սպասում է, թէ երբ պէտք է լուսանայ, որ այս քաղաքը աւերէ և գնայ:

\* \*

Իսկ Խանդուդ խանուսը դեռ էլի պարտիզի մէջ զբօսնում էր. կաղ նաժիշտն եկաւ և ասաց. «Ի՞նչ սև ժամին ես զբօսնում. ահա Դաւիթը պատրաստվում է քո պապական քաղաքն աւերել և գնալ»:

Գնացին հագնուեցան, կապեցին իրանց բոխչէն, քօղ

ծածկեցին և դարձան. և ուղղակի եկան իջևանի դուռը ծեծեցին, որ բանան:

Դաւիթը, որ նոր անոյշ քուն էր մտել, ասաց. «Ո՛հ, ո՛հ, ինչ անամօթ են այս քաղաքացիք, մինչև առաւօտ չեն համբերում, ասում են՝ ել աւերիր և գնա»:

Գորգիզը դուրս եկաւ ահով պատշգամբը. բայց երբ որ եկողներին տեսաւ, հանդարտուեցաւ և ասաց. «Եկողներից վնաս չկայ, նոքա քօսա են, պօղբերով չեն»: Դաւիթը հասկացաւ, որ եկողները կանայք են: Դուռը բացին:

Խանդուդը եկաւ իւր նաժիշտներով Դաւիթի մօտ և խօսեցաւ. «Դաւիթ, ասում են որ դու բարկացել ես իմ վրայ, որ ես քեզ անպատուեցի: Բայց գիտե՛ս, թէ ինչու անպատուեցի: Դաւիթ, դու ինձանից մի համբոյր առար ուխտած ճանապարհիդ համար, մէկն էլ առար քեզ համար, որ կտրիչ ես, երրորդն էլ՝ Աստուածոյ սիրոյն համար: Աւելի պագը թնչ բանի համար առար: Եթէ դու քո հօր կտրիչն ես, ես էլ իմ հօր կտրիչն եմ: Ասած է՝ աղջկան ազատիր եզիզիներէ ձեռքիցն, որ տղին ասեմ՝ թէ տղայ-մարդ է: Դու որ ինձանից աւելի պագ ես առնում՝ միթէ Շրբը-դան-Խորասական, Լուսայ-Հրմզայ հսկաների գլուխը արդէն բերել ես ինձ, որոնց հարսնախօսները միշտ գալիս են մեր տունը և ձանձրացնում են ինձ»:

Դաւիթը այս խօսքերից կակղեցաւ և ասաց. «Եթէ այդպէս է, լուսաբացին ես կերթամ նոցա գլուխը կըբերեմ քեզ: Ես ասացի և կերթամ. բայց եթէ բախտս այնպէս կտրէ, որ նոքա ինձ յաղթեն և սպանեն, դու եթէ սիրում ես քո Աստծուն՝ արի իմ դիակը փնտուիր, աջ թևիս վերայ կայ մի մսէ խաչ. այս նշանով ճանաչիր, վեր առ, բեր թաղիր, բայց մի թող որ նոքա այնտեղ անպատուեն մարմինս»:

Դաւիթը գնաց ճանապարհ ընկաւ

\* \*

Շատ զնաց, քիչ զնաց, այն հսկաների աշխարհքին մօտեցաւ: Հսկաները տեսան որ այնտեղից մի ձիաւոր է գալիս, ձիաւորի թողը երկինք է հասնում: Անցին. «Այդ ձիաւորը կռուի համար է գալիս, միայն թէ չլինի, որ դա Սրբոյի ճորտերիցն է»:

Երբ որ ձիաւորը մօտեցաւ, նոքա կանչեցին. «Այ մարդ, ո՞վ ես դու, և ո՞րտեղից ես գալիս»: Նա պատասխան չտուեց և էլի մօտեցաւ: Նոքա էլի հարցրին. «Արդեօք Խանդուղ խանումին չես ճանաչում, չես կարող այս մատանին նրան հասցնել»:

— Լաւ ճանաչում եմ, պատասխանեց Դաւիթը, բայց ես ոչ թէ ձեր մատանին տանելու եմ եկել, այլ ձեր զլխըները պէտք է տանեմ նրան:

Դաւիթը տեսաւ, ինչ հրէշներ տեսաւ, այդ Շրբբղան-Խորասականի վերին շուրթը այնքան էր կախուել, որ եկել հասել էր սրտի վրայ, ուստի և չանգալով տարել էր թիկունքի վրայ կապել. իսկ միւս հսկայի—Լօռայ—Հրմզայի ներքեւի շուրթը գետինն էր աւելում:

Դաւիթն ու այդ երկու հրէշները իրար առան գուրդ ու վահանով և կռուեցին մի օր մինչև երեկոյ: Դաւիթը կանչեց. «Ե՛ս, հաւատամ խոստովանիմ, ով բարձր Մարաթուկի սուրբ Նշան, Յիսուս որդի, դու օգնական», և զարկելով երկուսի զլխներն ևս կտրեց, իրանց մագերով մէկմէկու կապեց և խուրջինի նման ձիու գաւակին ձգեց. իսկ նոցա կախ ընկած լեզուները գետինը վարում էին, արծես գուլթանը ակօսներ է քաշել:

Այդպէս զլուխները բերելով, ճանապարհի կէսն եկաւ: Տեսաւ, որ դիմացի կողմից մի ձիաւոր է գալիս երկինքի և գետնի մէջ կրակ թափելով, և ձայն տուեց Դաւիթին. «Ե՛յ, քանի դեռ ժամանակ ունիս, պատրաստուիր. մտքիդ չանցնես, թէ այժմ Շրբբղան-Խորասական, Լօռայ—Հրմզայ հրա-

կաների պէսին ես պատահել»: Ասաց և անցաւ Դաւիթի թիկնակողմն ու մի գուրդ զարկեց: Դաւիթը ճարպիկութեամբ ծռուեցաւ, մի ոտքը հանեց ասպանդակից. գուրդը դիպաւ ձիու ասպանդակին առաւ տարաւ գետին:

Դաւիթը մէկ անգամ էլ շիտկեցաւ թամքի վրայ, ասաց. «Ե՛ս հաց ու գինի, Տէր կենդանի»: Գուրդը տարաւ որ զլխին տայ, բայց դիմացի կռուողը կուճ եկաւ և ծամերը թափեց նրա առաջ:

Դաւիթը տեսաւ և ճանաչեց որ Խանդուղ խանումն էր, որ մարդի պէս փոխուած դուրս էր եկել նրա դէմ:

Դաւիթն ասաց. «Այ չար անգամ, սիրտս ասում է որ մի գուրդ զարկեմ, քեզ գետնի տակ տանեմ. երկրորդ անգամն է, որ ինձ խայտառակում ես»:

Բայց Դաւիթն այն Դաւիթն էր, Խանդուղն էլ իւր սիրած խանումն էր: Մէկ-մէկի առան և դարձան եկան Խանդուղի քաղաքը. կանչեցին Խանդուղի հօրը, և Դաւիթն ասաց. «Քո աղջիկը չես տալ ինձ»:

Հայրն ասաց. «Թէ կառնես և կրմնաս այստեղ, կըտամ. իսկ թէ պիտի առնես զնաս, չեմ տալ»:

— Կառնեմ, կրմնամ այստեղ և չեմ տանիլ, ասաց Դաւիթը:

Այս խօսքը երբ որ առան՝ բերեցին տուեցին. նոցա պսակն արեցին ու եօթն օր եօթը գիշեր հարսանիք կատարեցին:

Ը.

Հարսանիքից մի ժամանակ որ անցաւ՝ Աստուած նոցա մի տղայ տուեց:

Դաւիթը տանը չէր: Երբ որ նրան իմաց արին՝ այնպէս ուրախացաւ, որ չէր էլ ուզում հաւատալ, թէ այդպէս բախտաւորուել է: Եկաւ և Խանդուղ խանումին ասաց. «Թէ

որ այդ տղան իմն է, նրա վրայ մի նշան, մի գորութիւն պիտի լինի»: Ասաց և գնաց մինչև որ պատասխան տանեն նրան:

Իերեցին տղային խանձարուր դրեցին և կապերի փոխանակ գութանի շղթայով փաթածեցին տղային: Երբ որ տղան լաց եղաւ և ձգձգուեցաւ օրօրոցի մէջ, նրա վրայի շղթան կտոր կտոր եղաւ: Պատասխան գնաց Դաւիթին՝ թէ տղան լաւ տղայ է, շղթան կտրտեց. միայն մի ձեռքը արատաւոր է, խուփ արած է, և ոչ ոք չի կարողանում բանալ նրա ձեռքը:

Եկաւ Դաւիթը, նստեց և մանկան ձեռքը այնքան մաժեց, մինչև որ բացեց. տեսաւ որ ձեռքի մէջ արեան նիշ կար, ասաց. «Հայ-հայ, աշխարհքը մի կաթիլ արիւն է արել դրել իւր ձեռքի մէջ. եթէ դա ողջ մնայ, զարմանալի բաներ պիտի դուրս գայ դրանից:

Իերեցին կնքեցին և անունը դրեցին Մհեր:

\* \*

Անցաւ մի ժամանակ, տղան մեծացաւ: Դաւիթը թողեց տղային Կաղզուան իւր պապի և մեծի մօտ, իսկ ինքը Խանդուզ խանումին առաւ ճանապարհ ընկաւ, որ տանի Սասուն իւր ազգականներին ցոյց տայ, և այնտեղ էլ հարսանիքը տօնէ:

Բայց ճանապարհին շատ թշնամի ազգեր կային, նոցա հետ պէտք է կուռէին: Այսպէս օրինակ՝ Խլաթցիք զօրք ժողովեցին ու պարիսպ կապեցին Դաւիթի դէմ և սայլերով պատուար շինեցին՝ կռիւ սկսեցին: Բայց միայն Դաւիթը չէր նոցա դէմ: Խանդուզը մզրախի կոթով զարկում էր պարիսպը քանդում էր, և սայլերը ձգում էր երկու ժամ ճանապարհի հեռաւորութեամբ. իսկ Դաւիթը կոտորում էր զօրքը և գնում էր առաջ:

Դաւիթը դարձաւ ասաց. «Խլաթցիք, դուք քնչ անպատկառ մարդ էք, որ մի հարսի դէմ էք կռվում. թէ

պատիւ կայ ձեր մէջ՝ թողէք հարսս տանեմ Սասուն, յետոյ զամ և կուռենք:

Նոքա թէև ամաչեցան, բայց չհաւատացին: «Որ այդպէս է, ասացին, ուրեմն երդուիր քո ծոցի Սուրբ Նշանով, որ հաւատանք»: Դաւիթն էլ ձեռքը տարաւ, որ իւր լսելքով սանդրի վրայ պիտի դնէր ու երդուէր, բայց ձեռքը դիպաւ Սուրբ Նշանին: Սուրբ Նշանի հնարն ու գորութիւնն էլ այն էր, որ նրանով երբէք չպէտք է երդուել էր:

Խլաթցիք ճանապարհ տուին, Դաւիթն առաւ Խանդուզին ու տարաւ Սասնոյ բերդը:

Ձեռքը տարաւ ծոցը և տեսաւ, որ Սուրբ Նշանն էր ընկել այն կողմը, որի վրայ ինքը երդուել էր. և ասաց. «Այսուհետև իմ բանը աշուկ չէ, թէ գնամ՝ զուր է, և թէ չգնամ՝ դարձեալ զուր է: Բայց որ երդուել եմ, պիտի գնամ»:

\* \*

Վերկացաւ եկաւ կռիւ անելու: Կռիւն սկսեց, բայց Խլաթցիք նեղը լծեցին, նրա ձին խրուեցաւ մի շամբի տղմերի մէջ. հաղիւ հազ այդ տղմից ազատուելով՝ եկաւ ջրի մէջ լուացուելու, որ ցեխից մաքրուի:

Այդ ջրի ափի փշերի մէջ մի չար աղջիկ էր կենում, որ ամեն լողացողի վրայ նետ էր արձակում և սպանում:

Երբ որ Դաւիթն էլ միամիտ լողանում էր, աղջիկը դարանամուտ եղած մի նետ զարկեց նրա թիկունքին: Դաւիթն զգաց, որ այս զարկը մահաբեր է, կանգնեց գոռաց, ձայնը հասաւ Սասուն:

Դաւիթի ձայնը լսելով՝ Սասնոյ մէջ մէկ տեղ ժողովեցան՝ Զէնով Ովանը, Խոր Դուսանը, քեռի Թորոսը, ձնձղափոքրիկը, Յանվէգին: Զէնով Ովանը Սասնից կանչեց, «Դաւիթ, մենք գալիս ենք»: Եւ շտապով եկան Դաւիթի օգնութեան,

որ արդէն ջրի մէջ լսել էր իւր եղբօր ձայնը: Նոքա հասան ջրի մօտ և գտան Դաւիթին:

Ձէնով Ովան, ասաց Դաւիթը, ինչ վիրաւորողը մեր գոռայու ձայնն առնելով, անշուշտ երկիւղից կիսակենդան ընկած կըլինի. գնացէք նրան գտէք, նրա դատաստանն էլ առնեմ, այնպէս մեռնեմ»:

Փնտռեցին գտան, որ մէկ չքնի աչքերով աղջիկ է: Դաւիթը դրա ոտը ոտի վրայ դրեց, քաշեց ճըւտեց: Երբ որ այդ հրէշ աղջիկն էլ չկար, մարդիկ եկան այդ կողմերը գիւղ շինեցին, անուներ դրին ձըւտիս: ձըւտիսն էլ յետոյ դառաւ ձապկիս, և այդ գիւղը այդ անուանով մինչև այս օր կայ:



Դաւիթն իւր սպանողին սպանեց, բայց ինքն էլ մահ էր մօտենում: Եղբայրներն ու քեռին առան Դաւիթին, գնացին Սասուն. չորս օրից յետոյ Դաւիթը մեռաւ:

Եղբայրները մեծ աղմուկով վերջապէս իրանց մէջ վրձուեցին, թէ Խանդուղին որքան հարսնամաս տան իրանց կալուածքներէց, և գնացին նրան սփոփելու և ողջութիւն ասացին: Իսկ Խանումը անմխիթար ասաց. «Հէյ... Դաւիթից յետոյ՝ ես սոցա ձեռքին պէտք է նայեմ և սրանց առակը պէտք է լինիմ»:

Եղբայրներն եկան մէկ-մէկ ասացին.

«Խանդուղ խանում, քո սև սուգը մի հագնիր,  
Դաւիթ մեռաւ, ես փոխարէն. ողջ եղիր»:

Խանդուղը երբ որ այս լսեց, ասաց. «Գնացէք դուրս, իմ պատասխանն այնտեղից դուք կը լսէք»: Նոքա դուրս գնացին, իջան ներքև, իսկ ինքը վեր ելաւ բերդի գլուխը, և այնտեղից մազերը փետելով՝ գետին գլորեց իրան: — Նրա գլուխը դիպաւ մի քարի և ծակեց քարը. այդ քարի մէջ

լցնում են Սասնոյ կէս չափ կորեկ և ծեծում են սանդի տեղ: Խանդուղի եօթնածիւղ ծամի տեղը դեռ մինչև այս օր երևում է, և այժմ էլ այդ սանդը այն տեղ է բերդի տաւը:

Թ.

Հաւաքուեցան Դաւիթի եղբայրները Խանդուղ խանումի վրայ, ձեռ տուեցին ծծերին, տեսան որ կաթ կար, ըստ որում երեխայ կար:

Ժողովուեցան միասին և ասացին. «Գուցէ ինչ որ եղել է, այնտեղ է եղել». և գնացին հասան Կաղզուան և տեղի Նըստողին ասացին. «Մեր եղբօրն ու հարսին այստեղ երեխայ է եղել, ո՛ւր է»:

— Ոչինչ չկայ, նոքա պատասխանեցին:

«Մեզ նշան կայ, ասացին Դաւիթի եղբայրքը. մեր հարսի ծծերում կաթ կար»:

— Մի աղջիկ է եղել նրանից և մեռել է, պատասխանեցին միւսները: Բայց սուտ էին ասում. իրանք գետնի տակին մի այր էին փորել, Մհերին դրել էին այդ այրի մէջ, և նրա վրայ պահապանէին կարգել:

«Մեր մեռելներին էլ նշան կայ, ասացին Դաւիթի եղբայրները. մեր մի տարեկանը մեր կէս հասակն ունի, իսկ երկու տարեկանը երկու, և այլն»: Եւ գնալով գերեզմանները նայեցին և տեսան, որ իրանց նշանով գերեզման չկայ:

Ձէնով Ովանն ասաց. «Կաշիներ բերէք, ինչ փաթաթեցէք, գոռամ, որ մեր տղէն իմանայ»:



Ձէնով Ովանին փաթաթեցին կաշիով, և նա գոռաց. Մհերը նրա ձայնը ճանաչեց և կամենում էր դուրս գալ,

բայց նրա պահապանն ասաց. «Այդ ձեր ազգի ձայնը չէ, այլ երեխայք թմբուկ են զարկում»: Բայց Մհերն երբ օր երեք անգամ ձայնը հասկացաւ, դռները կոտորեց և դուրս եկաւ: Գուռը դռան կոտորեց. առաջին դռանը աքացի զարկելով՝ նա գնաց դիպաւ երկրորդ դռան, երկրորդն երրորդին, և այսպէս եօթը դռներն էլ ջարդեց, դուրս ելաւ:

Տեսաւ, իւր հօրեղբայրներն այդտեղ են, հայրն այդտեղ չէ: Հարցրեց նրանց, և իմացաւ, որ Խլաթցիք սպանել են նրան: Լաց եղաւ և երեսի վրայ գետինն ընկաւ: Հօրեղբայրները թափուեցան վրան, և ինչ որ արեցին, չկարողացան բարձրացնել: Մհերի արտասուքը գետինը ողողեց և գնաց:

Երեք օրից յետոյ հազիւ ուղղուեցաւ Մհերը: Հեծաւ հօր քուռակը և գնաց Խլաթ, քարուքանդ արեց: Քանի որ այսպէս աւերում էր, բարձրանում էր նեմրութի գլուխը. և եթէ այնտեղ տեսնում էր, որ մի երգչիկից դեռ էլի ծուխ է բարձրանում, միւս անգամ դառնում էր, ջնջում էր: Ամենից վերջը տեսաւ, որ մի պառաւ էր մնացել, նրան էլ չըխնայեց, ասելով. «Թէև հոգուս մեղք եմ անում, բայց իմ հօր սպանողի ծուխն ու մուխը պէտք է կտրեմ». և կտրեց:

Այդտեղ հրաժեշտ առաւ հօրեղբայրներից. նոքա դարձան իրանց տեղը, իսկ ինքը գնաց Տօսպայ բլուրը. ասում են, որ մինչև այժմ էլ այնտեղ է, և մինչև այժմ նրա ձին տեսնում են, որի վրայ նստած պատրաստ կայ, որ գայ և աշխարհքը չար լծից ազատէ:

Պ.

Համբարձման գիշերը Մհերի ալրի դուռը բացվում է, և հրաման չկայ, որ նա դուրս գայ, գետինը նրան չի վերցնի, ոտքերը կըմխուրն գետնին:

Մի օր Համբարձման գիշերը մի նախրորդ տեսնում է,

որ Մհերի դուռը բացվում է. նախրորդը մտնում է ներս: Մհերը դրանից հարցնում է. «Դուք թնչով էք ուտում աշխարհքը»:

Նա էլ պատասխանեց. «Խելքով»:

— Հէյ, հէյ, մէկ էլ ասաց Մհերը, մեր ժամանակ լաւ էր. մենք ուժով էինք վայելում աշխարհքի բարուժիւնը:

Հիմա նախրորդը հարցրեց, «Մհեր դու երբ պէտք է դուրս գաս այդ տեղից»:

Նա էլ սրան. «Երբ որ ցորենը լինի սալորի չափ, և գարին մասուրի չափ, և ամենայն բան իմ ուժի չափին հասնի, այն ժամանակ միայն հրաման կայ, որ այս վիճակից դուրս գանք»:

Դեռ մինչև այժմ աշխարհքը Մհերից բաժանուած է մի դռնով:

ՏՈՂՄԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

Բաղդադի Խալիֆայ Գերի աղջիկ  
(կռապաշտ) (խաչապաշտ)

Կապուտկողի 2. Մուսուլի Սբամէլիք Սանասար  
Թագաւոր. Թագաւորի կին

1. աղջիկ

1. Մսլամէլիք

2. Յանվէգի, Ձէնով Ովան, Խոր- Կաղզուանի Թագաւոր  
գուսան, Ննճղափոքրիկ, Դաւիթ. Խանդուգ

Մհեր

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

Ս ենեքէրիմ՝ Քրիստոսի ծնունդից շատ առաջ էր,  
կռապաշտ էր. այն ժամանակ Հայերն էլ կռապաշտ էին.

Ս. Կարապետը չկար:

Բաղդադի Խալիֆները՝ Քրիստոսի Ծնունդից յետոյ, ոչ թէ կռապաշտ, այլ մահմեդականներ էին:

# Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Ք

## Սուրբ Կարապետ.

Շատ Հայեր եօթը շաբաթ պաս են պահում և եօթը տարի շարունակ այդ կրկնում են, որպէսզի Սուրբ Կարապետն իրանց խնդրածը, իրանց մուրազը, կատարէ: Մեր աշուղները շատ երգեր ունին շինած, և մեր ժողովրդի մէջ էլ շատ ականդութիւններ են պատմվում Ս. Կարապետի մասին: Ահա մի քանի կտոր այդ երգերից և ականդութիւններից.

### I

Սուրբ Կարապետ կազնեց յուսով,  
Գետ Յորդանան լցուեց լուսով,  
Քրիստոս քօ գիրկ մկրտեցին,  
Մուրազկատար Սուրբ Կարապետ:

### II

Դու աղա ես, դու վեզիր ես,  
Ամեն սրբոց գլխաւոր ես,  
Մարիամ Կուսին դու քաւոր ես,  
Մաքուր քաւոր Ս. Կարապետ:

### III

Սուրբ Կարապետ գլխատեցին,  
Ղայտար քաղքէն որ հանեցին,  
Մարմին զաթրին որ բարձեցին,  
Մշու սարի մէջ թաղեցին:

Սուրբ Կարապետի գերեզմանի վրայ Լուսաւորիչը մի  
եկեղեցի կանգնեցրեց, որ Հայերի մեծ ուխտատեղի է:—  
Ուխտաւորը հեռուից տեսնում է անտառախիտ մի լեռա,  
որ կարծես թէ մի մեծ գլուխ է մազերով. դա է «Մշու  
ծամբ», որի վրայ եկեղեցին է շինած:

Չորս բոլորը մեծ դաշտ է,  
Չորս բոլորը Հայու ցեղ է,  
Բարձր գմբէթն անոյշ տեղ է:

Երբ որ «Մշու ծամբ», թուխ ամպեր կանգնած, մառա-  
խուղով է ծածկվում՝ Ս. Կարապետը դիւան է անում. ամենի  
դարդին դարման ու դեղ է անում:

Ս. Կարապետ բարձր է բոլոր,  
ձամփէք ունի ոլոր-մոլոր,  
Կերթայ կրգայ շատ ուխտաւոր,  
Թէ ձիււոր, թէ ոտաւոր:  
Մուրազ կըտայ ոտաւորին,  
Ջուղաբ կըտայ ձիււորին:

Խցեր ունի անթիւ անդար,  
Միշտ անպակաս մէջը հիւրեր.  
Իննաղբիւրն է անմահական,  
Տակի ջաղացք խիտ հրաշական,  
Փուռն ու օջախ Ս. Կարապտի,  
Միահատիկ սաղ աշխարհքի:

Ս. Կարապետը բոլոր դուերին յաղթեց և ծառայ շինեց:  
Կազ դուն ամենայն օր վառուած կրակների մոխիրը շալակում  
է և գետնի տակով տանում, հեռու թափում այնտեղ, ուր  
որ Փրէբաթման անուկով մեծ բլուր է ձևացել: Ս.յդ կազն  
է Ս. Կարապետի փոշեհան, մինչև Գրիստոս դայ դատաստան:

Աշխարհ ժողվան, եկան քո տես,  
Լոյս կըփայլեր քո սուրբ երես.  
Ամեն աղքատ մարդու տէր ես,  
Դարդի դարման Ս. Կարապետ.  
Ծառայ կ'ըլնեմ քո շնորհքին,  
Շնորհք տուող ամեն աշղին,  
Մուրազատու Ս. Կարապետ:

Երգ շինականաց. \*

Լուսնակն անուշ, հովն անուշ,  
Շինականի քունն անուշ.  
Ծագեց լուսնակն երկընուց,  
Հովրւի փողն էր անուշ.  
Հօտաղն եղներ կ'արածէ.  
Մածկալ պառկեր, քունն անուշ.  
Ջրգզըղուն քամին կըփռէ,  
Ծովային հովն էր անուշ.  
Իաշտեր, ձորեր մընջեր են,  
Ջրեր գլգլան՝ ձէնն անուշ.  
Հաւքեր թառան իրենց բուն,  
Բըլբուլի տաղն էր անուշ.  
Անմահական հոտ բուրէր,  
Քաֆուր վարդի հոտն անուշ:

\*) Այս երգը արտաստուած ենք «Նահապետական և Հայրե-  
նի աշխարհից» որով միանգամ ընդ միշտ յայտնում ենք, թէ այն  
տեղ շատ կան այնպիսի դիւրըմբռնելի յօգուածներ, որոնք կարող  
են երկրորդ տարեշրջանում ևս կարդացուել բթէ ուսուցիչը այդ  
հարկաւոր համարէ և չբաւականանայ այստեղ մատուցած նիւթի  
քանակութեամբ:

Նաւակոծեալը Վանայ ծովի մէջ:

Նաւով Աղթամարայ ելանք  
 Գէպ Աւանուց ճամբան ընկանք,  
 Ոստանայ դէմ երբ մենք հասանք,  
 Սև օրուայ սև արև տեսանք:  
 Թուխ ամպեր երկինք պատեցին,  
 Աստղ ու լուսնակը ծածկեցին,  
 Պինդ - պինդ քամիներ փչեցին,  
 Ափ ցամաք աչքէս խլեցին:  
 Գոռաց երկինք, գոռաց գետին,  
 Խռովեցաւ ջուր կապուտ ծովին,  
 Չորս կողմից կրակոտ երկին,  
 Սև սարսափ իջաւ իմ սրտին:  
 Երկինք կայ՝ գետին չերևայ,  
 Գետին կայ՝ երկինք չերևայ,  
 Սարի պէս ալիքներ կրգայ,  
 Խոր անդունդ առևջս կրբանայ:  
 Ծով, դու թէ Աստուած կրտիրես,  
 Խեղճ անճարիս մի գուլթ անես,  
 Ինձ քաղցր արևէս չհանես,  
 Քարէսիրտ մահին չմատնես:  
 Աման ծովեր, ահէ՛ղ ծովեր՝  
 Ինձ մի տանիք պաղի հովեր,  
 Ձեզ կաղաչեն իմ արցունքներ,  
 Ու սրտիս հազար բիւր ցաւեր:  
 Ծով գազանն իսկի ողորմ չունի,  
 Պըլած սրտիս ձէնիկ չլօի:  
 Արիւն երակներս կըպաղի,  
 Սև գիշեր աչքերս կիջնի:

Գնացէք ասէք իմ ծնողին,  
 Թող նստի լայ իր սև որդին:  
 Թէ Հանէս կուր եղաւ ծովին,  
 Թուաւ գընաց արև կտրըչին:

Օրիորդի սև օրը:

Գ սփ Ես օր աստղը թուաւ կորաւ,  
 ամբար բն Լոյս արևդ խաւարեցաւ:  
 Ենչ դո Մեծ իշխանն քեզ տուել էր  
 անցմանից Թաթար խանին՝ Հետըն տանէ:  
 Ենթից չէի գըլխիս, վայ քեզ, Շուշան,  
 օրիցմք Գերի գնացիր Թաթարըստան:  
 անք բասաւ Լոյս հաւատքըդ պէտք է մոռնաս,  
 անամայս Մահամէդի կրօնքին դառնաս:  
 անի մի Խեղճիկ, էս էր քո արժանին,  
 անամայս Որ դու լինիս կին Թաթարին:  
 անտո ձեզ զու պէտք էիր լինիլ տիկին,  
 անամայս Տիկնանց տիկին մեծ իշխանին:  
 դիցար ան ոչ էսպէս անօրինին  
 անամայս Ձեռը կապած լինիս գերին:  
 յանձնք Վաթսուն տարի եմ ձեր զրրան,  
 անամայս Հէրդ պապերդ են իմ կրօն  
 միջրա Օրնած, սընած, իշխան եղած,  
 անամայս Էսպէս մին ցաւ ես չեմ տեսած:  
 անամայս Ականջդ բաց լըսէ խրատիս,  
 անայց Երտիգ պահէս էս պառաւիս:  
 անայց նո Ուր որ գընաս, ինչ տեղ լինիս,  
 անամայս Հաստատ մընաս լոյս հաւատիս:  
 անամայս Չմոռանաս Հայոց ազգիս,

Միշտ հանապազ նըրան օգնիս:  
 Ամենայն ժամ միտքըդ ձրգես,  
 Հայրենեացդ պիտոյ լինիս:  
 Է՛հ, Տէր ընդ քեզ, գընաս բարև,  
 Քրիստոս պահէ քո լոյս արև:

Տաղ վասն օտարութեան.

Վայրի հաւիկ մի եմ, բռնած ու բերած դրած զիս ի  
 նեղ զնդան.  
 Չուրախանայր սիրտ բաժանելոյս լընկերացս, որ չեմ  
 լիմ երամ:  
 Սրտաբեկեալ եմ, միջակոտոր, ճար չունիմ, զի՛նչ լինիմ  
 գերիս:  
 Եթէ զբուլբուլն ու առարակ բերեն ինձ երգասաց գու-  
 սան, չուրախանամ.  
 Եթէ հազար գոյնզգոյն փետուրներ ինձ բերեն խա-  
 լաթ տան, չուրախանամ.  
 Եթէ զշաքարն ի մազածու բերեն կերակուր ինձ տան,  
 չուրախանամ.  
 Եթէ հազար թախտի հուքմն ինձ տան ու հարիւր  
 հազարի տէր առնեն, չուրախանամ.  
 Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն, անհամար հեծեալ  
 ձիաւոր, չուրախանամ.  
 Եթէ դարպաս ինձ շինեն, ոսկուով զարդարած, անգին  
 արգարտով, չուրախանամ.  
 Իսկ եթէ հնար ճարակ լինէր ինձ ելնել ի նեղ զնդանէս,  
 Եթէ լինէր որ թուչէի, բարձրանայի, տեսնէի զիմ երամս,  
 Խաղալով, ճախրելով ու կանչելով խառնիլ լիմ երամս,  
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս,  
 Յայնժամ խառնէի լընկերացս երամ:

Տաղ վասն մահուան.

Քանի՛ դատիս ի հետ մեղաց,  
 է անզգամ մարդ կատաղած,  
 Ձայնչափ չարիք որ գործեցիր,  
 Հերիք արա՛, դարձիր՝ մեղաց:  
 Ի Յադամայ մինչև այս օր  
 շունչ կենդանի գերծ չըմնաց,  
 Գիտեմ չըլսես խրատու գրոց,  
 մեղաւորաց թէ կայ պահած:  
 Ով որ ունի բերդ ու քաղաք,  
 դարպաս ունի ոսկով ծեփած,  
 Յետոյ եթող զամէնն անտէր՝  
 ներքև հողուն է նա պառկած:  
 Ով որ խմէր զանոյշ գինին  
 զինքն բտէր քան զխոզ ուռած,  
 Տեսայ զնա խիստ ատելի,  
 չանուշահոտ գէշ մի ձգած:  
 Ով որ հեծնուր ձի բարձրավիզ  
 ու թուր քաշէր ամեն դեհաց,  
 Տեսի զնա խիստ փոշիման,  
 երկու փայտի մէջ էր պառկած:  
 Է Յովաննէս Թուրքուրանցի,  
 սրտի մտօք զականջդ բաց,  
 Աստէն արա՛ քեզ ճար շուտով,  
 անդէն առնուս սլրսակ փառաց:

**Բաղդադ.**

Կար ժամանակ, երբ որ Արաբները աշխարհքի կէսը տիրել էին: Այն ժամանակ նոքա մեծ ազգ էին: Մահմեդականութիւնը նոքա տարածեցին: Գոցա ամենահռչակաւոր քաղաքներից մէկն էր Բաղդադը, որ Տիգրիս գետի վրայ է շինած: Մանաւանդ Խալիֆ-Հարուն-ալ-Ռաշիդի ժամանակ այդ քաղաքը շատ պայծառացաւ, հարստացաւ. այն ժամանակուայ ամենամեծ ուսումն ու գիտութիւնը այդ տեղ էր: Նա այժմ էլ կայ, բայց հին շքեղ քաղաքից մնացել է միայն մի քանի մինարէներ, պարիսպներ, աշտարակներ և դռներ: Երևելի են նրա միջի արմաւենիներն ու պարտէզները: Տները դրսից անշուք են, բայց ներսից բողկացած են մի քանի գաւիթներից, իւրաքանչիւր գաւիթը պատշգամբներով և բնակարաններով: Ունի լաւ բազար և արևելեան ապրանքների մեծ առուտուր: Բաղդադի ուղտերը և մանաւանդ կայտառ սպիտակ էշերը՝ պմենայն տեղ գոված են:

Որքան որ մեծ էր երբեմն այդ քաղաքի և միջինըստած խալիֆաների համբաւը, ինքը քաղաքն՝ մեծամեծ պատուհասներ կրեց: Երկու անգամ ամենասարսափելի ժանտախտ մտել է դրա մէջ՝ օրէնը 4000 մարդ զոհ առնելով: Մարախի բուն հայրենիքը դա է: Շատ անգամ զարհուրելի սով է եղել. մի անգամ էլ Տիգրիսն այնպէս սաստիկ վարարեցաւ, որ մէկ գիշերում 7000 տուն և 15,000 մարդ կուլ տուեց: Եւ այսպէս մի անգամ գոռոզ Բաղդադը հասարակ քաղաքների շարքն է անցել:

Քաղաքն այժմ տաճիկների ձեռին է, ինչպէս և Մուշն ու Ս. Կարապետը:

(Բաղդադի խալիֆաները միշտ մահմեդական են եղել,

և ոչ թէ կռապաշտ. իսկ Սենեքերիմ, ասորեստանեայց թագաւորը, իրօք կռապաշտ էր, բայց նրա ժամանակ Բաղդադը չկար):

**Սենեքերիմ և նրա որդիքը**

Մեր հին պատմութիւններում գրած է, թէ Քրիստոսից հազարաւոր տարի առաջ, երբ ոչ Ս. Կարապետ կար և Հայերն էլ գեռ Քրիստոնեայ չէին՝ կար Ասորոց թագաւորութիւն: Ասորոց Սենեքերիմ արքան իւր Ադրամելէք և Սանասար որդոց ուզում էր կուռքին զոհ մատուցանել, սոքա էլ իրանց հօրը զոհեցին, և փախչելով եկան Հայաստան՝ մեր Սկայորդի թագաւորի ժամանակ: Նրանցից ծագեցաւ Հայոց երևելի նախարարութիւններից մէկը, այն է՝ Արծրունեաց նախարարութիւնը, որ Հայաստանի կառավարիչներից շատ պատիւ ստացան, և իրանք ու իրանց սերունդն էլ շատ ծառայութիւն և քաջութիւն արեցին: Նոքա բնակեցան Վանայ ծովի հարաւային ափերում, և Սասնոյ գաւառի շինութիւնն ու սկզբնաւորութիւնը դրանց ձեռքով կատարուեցաւ:

12

**Գուռզուռայ Աստղիկի լոգարանը**

Եփրատը երբ որ մտնում է Մշոյ գաշտը և Կինճայու ձապաղ ջրի սարերի ու ձորերի քարերին է դիպչում՝ մի նեղ կըրճով շատ սեղմուելով գնւ ու գնւռ ձայն է արձակում. այդտեղը կոչվում է Գուռզուռայ, ուր հին Հայերի դիցուհի Աստղիկի լոգարանն է եղել: Այդ դիցուհին գիշերները սովորութիւն է ունեցել լուացուելու: Շատ երիտասարդներ, բարձր սարերի վրայ մեծ կրակ էին վառում, որ նրա լուսով Աստղիկի չքնաղ գեղեցկութիւնը տեսնէին: Դիցուհին երի-

տասարդների յանդգնութեան չհամբերելով՝ մշուշով պատեց չորս կողմը, որ դաշտի մէկ ծայրից սկսած մինչև միւս ծայրը, թէ ամառ և թէ ձմեռ մինչև սարերի գլուխը այնպէս բռնվում է, որ անհնարին է լինում որևիցէ կողմի լեռներից տեսնուիլը: Ահա այս թանձր և շարունակ մշուշից ծածկուած լինելու պատճառով այդ դաշտը կոչվում է Մշոմ դաշտ:

Մշու սարեր մշուշ է,  
Իւր հողն ու ջուրն անոյշ է:

### Մշոյ աշխարհ կամ Տարօն.

Մշոյ աշխարհի ժողովուրդը միշտ նշանաւոր է եղել իւր քաջութեամբ: Կրօնասիրութիւնն էլ այստեղի Հայոց սեպհական ձիրքն էր. քանի որ ժողովուրդը կռապաշտ էր՝ քուրմերը մեծ պատերազմ են տուել Տրդատին և Լուսաւորչին, և երբ որ ճշմարիտ աստուածապաշտ դառաւ՝ այն ժամանակ էլ Վարդանի և իւր նմանների առաջնորդութեամբ սաստիկ կռուել է Պարսից մոգակրօնութեան դէմ:

Մամիկոնեանց մեծ նախարարութիւնն էր այս աշխարհքի տէրը:

Մշոյ Հայերը պէտք է քաջ լինէին, որովհետև իրանց հայրենիքը զարմանալի դիրք ունի: Այն ամեհի բարձրաբերձ ելունները, որով նոքա պատած էին, սրտին էլ համարձակութիւն պէտք է ազդէին. անտառներով մացառներով զարդարած գագաթներն ու ծոցերը, նոյնպէս և շամբերը, որոնց մէջ գագանները լիքն են, ստիպում էին իրանց, որ գէնքի վարժուեն՝ թէ որսալու և թէ պաշտպանուելու համար: Այս ընդարձակ դաշտը և այն մեծատարած երկինքը վեհութիւն և վսեմութիւն էին ազդում նոցա հոգուն, և այն պատուական կլիման արդէն զօրաւոր և յաղթանդամ կազմում էր նոցա մարմինը:

սատանաները բիւր բիւրոց ժողովում են և աշխատում են հառակ կանգնել արևին, որպէս զի նրա լոյս երեսը մարդիկ չըտեսնեն, բայց հրեշտակները հրեղէն սրով պատերազմում են, դուրս են ձգում նոցա սև ամպերի միջից: Եւ այս կռուի ձայնն է ամպերից լսուած որոտումն. փայլակը՝ Գաբրիէլ հրեշտակի սուրն է, կայծակը՝ հրեղէն նետն է, և ծիածանը աղեղն:

### Մհերի դուռը.

Վանայ բերդից դէպի արևելք նայելով մի լեռնագօտի կայ, որի արևելեան գլուխն անուանվում է Ջըմփ-զըմփ մաղարայ, արևմտեան ծայրը՝ Ա. գ. փ. ի, և մէջ տեղը՝ Մհերի դուռ: Գոցա դիմացն են Վանայ երևելի Այգեստանիայքը: Ջըմփ զըմփ մաղարան մի ընդարձակ քարայր է, ուր ձայն արձակած ժամանակ զըմփ-զըմփ արձագանք է տալիս: Ներսը այդ քարայրի ամենամութ անկեան մէջ ճանապարհ կայ, որտեղից սաստիկ քամի է փչում. այդ լեռնափոր ուղին, ասում են, թէ մինչև Վանայ բերդի մէջ է տանում: Ինքը Ջըմփ զըմփ մաղարան էլ բերդաձև գագաթ ունի, և քանի որ փորել են, այնքան աւելի շէնքեր են գտել մէջը՝ զարմանալի շէնքեր, կոփածոյ քարից լայն սանդուխներով, մէջը հողէ կարասներ, կժեր, արհեստական աթոռներ, պղնձէ թափծու արձաններ, երկաթէ նետեր, խոփեր, և այլն:

Մհերի դուռը բոլորովին մերկ քար է, որը որ մեծ արհեստով տաշել, կոկել են մեծ դռան ձևով, կամ աւելի ճիշդն ասել, մի տախտակի ձևով և սիրուն քառանկիւն շրջանակով, վրան գրել են բևեռագիրներ՝ խիսա յստակ: Այդ գրերը շատ հին գրեր են, և պատմում են ամենահին բնիկ ժողովրդեան գլխին եկած անցքերը:

Մհերի դուան վերեւից կաթ-կաթ ևս ջուր է ծորում: Եւ  
ասում են. «Մհերն և իւր ձին Աստուծոյ հրամանով փակուել  
են այնտեղ: Այն սև ջուրը Մհերի ձիու քրտինքն է: Այդ  
դրան ներսը ճախրի ֆալակն է պտըտում, այսինքն  
աշխարհքի մարդկանց կամ երկրագնտի ճախրը-անիւը: Մհերը  
շարունակ նրա վրայ նայում է. երբ որ այդ ճախրը դադարի,  
այն օրը Մհերը կազատուի, դուրս կըգայ և աշխարհքը  
կաւերի»: Եւ թէ՛ «Ամեն տարի Համբարձման գիշերը երկինք  
ու գետին իրար համբուրում են. և այդ րոպէին Մհերի  
դուռը բացվում է: Ով որ արթուն է մնացել, այդ վայր-  
կեանը տեսել է, ինչ որ սիրտն ուզել է՝ այնպէս է եղել:  
Շատ մարդիկ միայն ոսկի են ուզել և այդ վայրկեանին  
մտել են դուրս բերելու, բայց ազահ լինելով, ուզեցել են  
շատ վերցնել և ուշացել են. դուռը փակուել է, նոքա մնա-  
նել են ներսը»:

Մեր պատմութիւնն ուրիշ տեսակ է պատմում: Եւ  
առհասարակ ժողովուրդը շատ տեսակ պատմութիւններ ունի  
Մհերի մասին:

---

2013

13144

